



«Հիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
Ք. Երևան 0009, Կոռյունի 19ա, ք. Հիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝ +374 268 2 37 99, +374 94 54 37 07
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

Ֆիզիկայի ուսուցիչ

[«Հիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ](#)

Մոլդովական 77, ք. Հիլիջան, Հայաստան

Դիմումների ընդունման վերջնաժամկետ՝ 31.01.2018 թ.

[Աշխատանքը Հիլիջան քաղաքում է:](#)

Աշխատանքի սկիզբը՝ ուսուցչի ընտրությունից անմիջապես հետո:

Մասնագիտական և անձնային պահանջներ

Մեզ կարող են դիմել **բոլոր այն ուսուցիչները**, ովքեր բավարարում են հետևյալ չափանիշները.

- ունեն ֆիզիկայի մանկավարժության (ֆիզիկայի դասավանդում) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում,
- տիրապետում են համապատասխան տարիքային խմբի երեխաների հետ աշխատելու համար անհրաժեշտ հաղորդակցական և համագործակցության հմտությունների,
- ունեն հիմնավոր գիտելիքներ դասավանդվող առարկայից, ինչպես նաև տիրապետում են մանկավարժական և տեխնոլոգիական գիտելիքին՝ այն դասավանդման ընթացքում տեղին և բավարար ծավալով կիրառելու համար,
- գիտեն անգլերեն այն մակարդակով, որը թույլ կտա թարգմանել դասագրքեր և հասկանալ ու օգտագործել համացանցում տեղադրված նյութերը: Տիրապետում են իրենց աշխատանքի համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերին (օր.՝ Microsoft office և այլն),
- կրթությանը վերաբերում են ոչ միայն որպես անձ ձևավորելու, այլ նաև Հայաստանի ապագան կերտելու գրավական: Ուսուցչական առաքելությունն իրականացնելիս դրևորում են ճանաչողական բազմակողմանիություն, ստեղծագործական և վերլուծական մտածելակերպ, հուզական զսպվածություն, հոգատարություն և պատասխանատվություն,

- դասավանդման հմտությունները կատարելագործելու համար մասնակցում են թե՛ ներդպրոցական, թե՛ դպրոցից դուրս գործող փորձարևական համայնքների աշխատանքներին և այլ մասնագիտական ձևաչափերին, հետևում են մասնագիտական և մանկավարժական նորարարություններին ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում,
- տիրապետում են ժամանակի կառավարման հմտություններին:

Դիմելու կարգ

Բոլոր թեկնածուներին ինկոլում ենք vacancy@dcs.am Էլփոստի հասցեին ուղարկել՝

1. ինքնակենսագրություն (CV, նկարը պարտադիր է),
2. նամակ-հիմնավորում «Ինչու՞ եմ ուզում աշխատել Դիլիջանի կենտրոնական դպրոցում» թեմայով (մեկ էջից ոչ ավելի),
3. դասավանդման, դասարանի հետ աշխատանքի վերաբերյալ սեփական մոտեցումների ու առաջնահերթությունների հակիրճ ներկայացում (նշված ձևաչափերից որևէ մեկով՝ MS Word, Power Point, Adobe PDF, Flash, Video և այլն):

Նամակի վերնագրում անհրաժեշտ է նշել՝ **Physics Teacher**: Հայտերն ընդունվում են մինչև **2018 թ.-ի հունվարի 31-ը ներառյալ**:

Դիմորդներին հետագա քայլերի մասին մենք կտեղեկացնենք Էլփոստով՝ դիմելու վերջնաժամկետից հետո:

Կազմակերպության մասին

Դիլիջանի կենտրոնական դպրոցը ստեղծվել է 2013 թվականին [«Այբ» կրթական հիմնադրամի](#) կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) հետ համագործակցության արդյունքում: Այն հիմնական դպրոց է՝ նախատեսված է 1-9-րդ դասարանցի մինչև 160 աշակերտի համար:

Դիլիջանի կենտրոնական դպրոցը «Այբ»-ի իրագործած առաջին դպրոցական նախագիծն է՝ արտաքին պատվերով և ֆինանսավորմամբ: «Այբ» կրթական հիմնադրամի և ՀՀ ԿԲ համագործակցության արդյունքում ստեղծվել է դպրոցի քաղաքային մոդել՝ հասանելի ոչ միայն ՀՀ ԿԲ աշխատակիցների, այլև Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների համար: Դպրոցում ուսանելու պայմանները նույնն են բացառապես բոլոր աշակերտների համար:

Դպրոցը «Այբ» համակարգի առաջին դպրոցն է՝ կառուցված Երևան քաղաքից դուրս: Իր գաղափարախոսությամբ ու տեսլականով, ուսումնական ծրագրով, դասավանդման մեթոդաբանությամբ ու մոտեցումներով, ուսուցիչների և աշակերտների ընդունելության քաղականությամբ դպրոցն ամբողջությամբ սինխրոնացված է Երևանի «Այբ» տարրական և միջին դպրոցների հետ: «Այբ» կրթական հիմնադրամը նաև պատասխանատու է դպրոցի կառավարման և «Այբ»-ի չափանիշներին համապատասխան ուսումնական բովանդակության վերահսկողության համար:

